

Բ. Լ. Ջուգասպյան

ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆԸ

(Գեորգ Դպիր Պալատացու ծննդյան 225-ամյակի և մահվան 150-ամյակի առթիվ)

Հայ բառարանագրության պատմության մեջ եղակի տեղ ունի Գեորգ Դպիր Պալատացու պարսկերեն-հայերեն բառարանը, մի ծավալուն ու օգտաշատ հուշարձան, որ իր կատարումով կանգնած է եղել ժամանակի եվրոպական բառարանագիտության ամենաբարձր մակարդակի վրա: Այս բառարանը մի աջնպիսի աշխատանք է, որտեղ համակողմանիորեն դրսևորված են հեղինակի ոչ միայն լեզվաբանական լայն պատրաստությունն ու հմտությունը, այլև ընդհանրապես նրա բազմահարուստ գիտելիքները արևելյան ժողովուրդների, մանավանդ պարսից մշակույթի բնագավառում:

18-րդ դարի երկրորդ կեսը հայ մտքի նոր վերածննդի սկզբնավորման ժամանակաշրջանն էր: Եվրոպայի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող մեծ տեղաշարժերը իրենց հետավոր արձագանքներն էին գրույնում նաև Արևելքի ժողովուրդների մոտ: Այդ հեղաքեկումների անմիջական հետևանքը հայ իրականության մեջ հանդիսանում էր լուսավորական գործի ծավալումը նախ հայաշատ կենտրոններում, ապա ավելի ուշ ժամանակներում նաև բուն Հայաստանում: Կապիտալիզմի զարգացումը եվրոպայում աշխուժացնում էր Արևմուտքի և Արևելքի միջև տեղի ունեցող առևտուրը, իսկ այս բնագավառում հանրահայտ է հայերի կարևոր դերը: Առևտրական հարաբերությունների հետևանքով հայ և տարբեր ժողովուրդների միջև ստեղծված սերտ շփումը նպաստում էր միաժամանակ նրանց մշակութային փոխհարաբերությունների զարգացմանը: Հենց սրանով էլ պիտի բացատրել այն հանգամանքը, որ հայկական մշակութային խոշորագույն կենտրոններում դպրոցական գործը, այդ թվում և օտար լեզուների դասավանդումը, նոր ու կայուն հիմքերի վրա է դրվում:

Լուսավորական գործը լայն ծավալ է ընդունում նաև Կոստանդնուպոլսում, բացվում են դպրոցներ, տպագրվում են ինքնուրույն ու թարգմանական աշխատություններ, գեղարվեստական երկեր:

Ժամանակի պոլսահայ մտավոր կյանքի լավագույն ներկայացուցիչներից է Գեորգ Դպիր Տեր-Հովհաննեսյանը (1737—1812), հայտնի Պալատացի մականունով, որը 18-րդ դարի երկրորդ կեսին մանկավարժական ու գիտությունների զարգացման շարժումների շրջանում է ծավալում:

Տիրապետելով բազմաթիվ լեզուների (երբայեք հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն և թուրքերեն), Գեորգ Դպիրը ոչ միայն թարգմանություններ է կատարել այդ լեզուներից, դրանց համար կազմել քերականական ձևաբանություններ, գրել պատմական ուսումնասիրություններ՝ մեծ չափով օգտվելով օտար սկզբնաղբյուրներից, այլև զբաղվել է գրչությամբ՝ ճշգրտելով ու սրբագրելով միջնադարյան հայկական առանձին հուշարձաններ:

Հատկապես բեղմնավոր է եղել նրա թարգմանչական գործունեությունը իր գիտական գործունեության առաջին տասնամյակներում: Այդ տարիներին պարսկերենից նա թարգմանել է 15-րդ դարի հեղինակ Աբդուլ ազիզ Աբդուլ-ռահման Թարբիվիի «Բանալի աստեղաբաշխութեան...» (1768 թ.), «Բիրք մեծագին և պատուական ականյ...», որը ապացուցված է 1807 թ. Կոստանդնուպոլսում, իսկ հունարենից թարգմանել է «Բան՝ յադագոս նաւապետաց գափուաան իոշեցելոլ...» (1769 թ.) և այլն: Նրա կատարած թարգմանություններից կարելի է հիշել «Հալելի գրոցն Հոմերոսի, որ է արձակ պատմութիւն Էլիականին, թարգմանեալ ի յոյն բնագրէ, յամին 1783 թ.»:

Գեորգ Դպրի պատմագրական կարևոր ուսումնասիրություններից է «Բիրք պատմութեան արքայից Օսմանեան դարմին...», որը ժամանակին օգտագործել է Գ. Ալվադովսկին իր «Օսմանյան պատմության» համար:

Ինչպես հիշատակել է նրա կենսագիր Ա. Ալվազյանը, Դպիրը կազմած է եղել նաև արարներն ու պարսկերեն լեզուների դասագրքեր, որոնք դժբախտաբար մեզ չեն հասել:

Դեորգ Դպիրը հալ ալն մտավորականներից է եղել, որ խոր գիտակցել է հնագույն գրչագրերի արժեքն ու նշանակությունը մեր ժողովրդի պատմության ու մշակույթի համար և մասնակցել է դրանց փրկության աշխատանքին՝ թե անձամբ արտագրելով և թե հավաքելով: Բարկեն Կյուլեսերյանը Ղալաթիայի մատենադարանի ձեռագրերի մեջ նկարագրել է Խորենացու և Եղիշեի պատմությունների դպիրյան ալնպիսի արտագրություններ, որոնց հիմք-օրինակները եղել են ընտիր, Եղիշեինը՝ 1167 թվականից: Անհրաժեշտ է հիշել, որ Դպրի ջանքերով է, որ վերջնական կորստից փրկվել ու համաշխարհային գիտական հասարակացության սեփականությունն է դարձել Եվսեբիոս Կեսարացու պատմության աշխարհում միակ հայերեն թարգմանություն օրինակը: Նրա արտագրությամբ է նաև պահպանվել, իսկ Ղևոնդ Ալիշանի ջանքերով հրատարակվել հռչակավոր «Բիրք վաստակոցը»:

Մական Դեորգ Դպրի զուլս գործոցը նրա պարսկերեն-հայերեն բառարանն է, որը ժառանգական պարսկերէն ըստ կարգի հայկական ալրուրենից խորագրով լույս է տեսել հեղինակի մահվանից հետո՝ 1826 թվականին. Կոստանդնուպոլսում, Հակոբ Տյուդյանի հմուտ առաջարկով ու անմիջական հսկողությամբ: Այս բառարանը ոչ թե սոսկ «բառագիրք» է, ինչպես անվանել է ինքը Դպիրը, այլ իրանական մշակույթի մի հանրագիտարան, որտեղ կարելի է ամփոփ տեղեկություններ գտնել իրանական գիցարանության, առասպելաբանության, ժողովրդական ասացվածքների ու առածների, սովորությունների ու բարքերի, վիպական հերոսների ու ականավոր գրողների մո-

Դեորգ Դպրի մասին տես Ա. Ալվազյան, Շար հայ կենսագրություն, Ա. հատոր, Կ. Պոլս, 1893, էջ 11—73, Հ. Բ. Ա. ճ ա ղ յ ա ն, Պատմություն հայոց նոր դրականության, պրակ Ա., Նոր-Նախիջևան, 1910, էջ 105—109, Ա. Մ ա ն ու լ յ ա ն, Դեորգ Դպիր Տեր-Հովհաննեսյանի ձեռագիրները, Ս. Ղազարու մատենադարանին մեջ, «Բազմավկյ», 1957, էջ 168, է. Գ. Բ. Ա. ղ յ ա ղ յ ա ն, Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Կ. Լ. Երևան, 1958, էջ 135—139:

Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական ալրուրենից, յորում ճոխաբար առանցին իմաստը բառիցն հայերէն և տաճկերէն քաջատրութեամբ և ուրիշ արաբական նշանակութեամբ: Բաւելեալ և գյատուկ անուանս նշանաւոր թագաւորաց և դերեկի տաղեաց, և ճոխացուցեալ օրինակօր ի բանաստեղծից պարսիցի ի Դէորդեայ Դպրէ, Տէր-Յովհաննեսեան Պալատացոյ: Աշխատութեամբ և ուղղագրելով և համառօտ քերականութեամբ ի Բակորայ Տիւգեան... ի Կոստանդնուպոլս. 1826, 715 էջ:

սին՝ և այլ շատ հետաքրքիր նյութեր: Բառարանում՝ լուրաքանչլուր բառա-
նոգովածի համար տրված են ոչ միայն մի քանի իմաստներ, այլև հայաստան
պարսկերենով բերված են բազմաթիվ վկայություններ իրանական դասական
գրողներ Ռուդաքից, Ֆիրդուսուց, Սալամից, Սաադիից, Հաֆիզիյ և շատ
ուրիշներից. անգամ առանձին դեպքերում այդ վկայությունները թարգման-
ված են հայերեն, որով բառարանը էլ ավելի է հարստանում և արժեքա-
վորվում որպես պարսից բանաստեղծների ստեղծագործությունների առան-
ձին նմուշների, հաճախ առաջին, հայերեն թարգմանությունների հայաքառու-
մի բան, որ իր նմանը և նախատիպը չի ունեցել մեր գրականության մեջ:

Իհարկե պարսկերեն-հայերեն բառարաններ ձևագիր վիճակում կղև
են և Դպրից շատ առաջ: Ենթանագրական փառտերը ցույց են տալիս, որ
դեռևս 10—11-րդ դարերում Հայաստանի գպրոցներում հունարենի և արա-
բերենի հետ մեկտեղ դասավանդվել է նաև պարսկերենը: Պետք է ենթադրել,
որ այս նույն ժամանակներում ուսուցչման նպատակներով կազմվել են դա-
սավանդման ձեռնարկներ ու բառարաններ:

Պարսկերեն-հայերեն մեզ ծանոթ հնագույն բառարանը «Թարգմանութիւն Պարսիկ բառի ի Վարդան գրոց» խորագրով փոքրիկ բառամատյանն է, որտեղ ի մի են բերված Եղիշեի պատմության մեջ հանդիպող պարսկերեն բառերը: Ենթադրություններ կան, որ սյս բառարանը կազմվել է 13-րդ դարում. հնագույն ընդօրինակությունը 15-րդ դարի վերջերից է:

Երևանի Մատենադարանի 14—15-րդ դարերի մի ձեռագրում՝ № 7151, պահպանված է եղելգվյան՝ արաբերեն-պարսկերեն-հայերեն մի քառարանի տառչին՝ ա, բ, թ, տառերը: Բառարանը հայատառ է: Ջղացվում է, որ հայ հեղինակը ձեռքի տակ ունեցել է ինչ-որ արաբերեն-պարսկերեն ալբեմնական կարգով կազմված մի բառգիրք, որը և ինքը հայացրել է: Բառերի հայերեն նշանակությունների արտակարգ ճշգրտությունը, հետևողական ու միօրինակ տառադարձությունը իրավունք է տալիս ենթադրելու, որ բառարանը

Բառարանի վերջում զրված է հայերենի և պարսկերենի նույնանիշ և նմանաձայն բառերի մի դանկ, որը ակադեմիկոս Հր. Աճառյանը, պրոֆ. Էդ. Աղայանն ու պրոֆ. Գ. Զահեկյանը առանց որևէ տարակուսանքի Գեորգ Դպրի հեղինակությունն են համարել և բարձր են գնահատել որպես գիտություն արդի խոսքին համապատասխանող, մեծագույն մասամբ ստույգ և հնազույն հայ ստուգաբանություններ (Հր. Աճառյան, Պատմություն հայոց նոր զրականություն, սյր. Ա., էջ 107), ինչպես և Մխիթարի բառարանից հետո առաջին լուրջ ստուգաբանական փորձ (Էդ. Աղայան, Հայ լեզվաբանություն պատմություն, հ. 1, էջ 137—140) և որպես Պետերմանից ու Վինգիշմանից առաջ հայերենի ու պարսկերենի համեմատության փորձ (տես Г. Джавкян, О первых попытках применения сравнительного метода в истории армянского языка-кознания, Հայկական ՄԱՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակ. գիտութ.), 1957, № 6, էջ 60—61)։ Բառացանկին տրված այս իրավացի գնահատականները, սակայն, պետք է հասցեագրել ոչ թե Դեորգ Դպրին, այլ նրա բառարանի հրատարակիչ Հակոբ Տյուզյանին, որը ո՛չ միայն կազմել է այս բառացանկը, այլև զրել է բառարանին կցված պարսկերենի թերականոնությունը, այդ մասին պարզորեն ասված է հրատարակչի առաջաբանում. «Ժողովեցաք ևս ի բառաբանելս զամենայն նմանաձայն բառս որ ընդ հայս և ընդ պարսս, և դասակարգեցաք ի վերջոյ հանդէպ միմեանց, ի զուգադրութենէ աստի՛ գայն միայն է մեզ հաւատելո՛ թէ լատին մերձաւորութեան և սահմանակցութեան երկուց ազգացս՝ բազում նմանութիւն է բառից, ևս և ոմոյ խօսից ընդ մէջ հայոց և պարսից, այլ ոչ թէ և լեզուի մերոյ, և ազգի նոյն զոլ ընդ նոսա։ Զի և յորինուած իսկ կազմութիւն երկուքս այսորիկ ի միմեանց» (Գ 1 որդ Ի պ ի բ, Բառարան պարսկերէն, էջ 1Է—Թ)։

րանի հեղինակը ունեցել է լեզվարանական կուռ գիտելիքներ և քաջ տիրուպետել է արդ լեզուներին՝ Մեղ ծանոթ միջնադարյան բառարաններից և ոչ մեկը Դպրի բառարանի ո՛չ ծավալը, ո՛չ որակը և ո՛չ հարստությունը չունի:

Հետաքրքիր ու կարևոր է Գեորգ Դպրի պարսկերեն-հայերեն բառարանի ստեղծման պատմությունը:

Իպրից մնացած ձեռագիր ժառանգության մեջ պահպանվել են մի քանի բառարաններ, որոնք նոր լույս են սփռում անխոնջ գիտնականի բառարանագրական գործունեության վրա:

Բառարանագրության Դպիրը սկսել է զբաղվել երիտասարդ տարիներին՝ 1764 թվականից: Այս է վկայում Ղալաթիայի հայոց ազգային մատենադարանում պահպանված պարսկերեն-հայերեն մի ձեռագիր բառարան, որը նկարագրել է Բարկեն Գաթողիկոս Կյուլեսերյանը: Բառարանը վերնագրված է «Բառգիրք պարսկական համառոտ մեկնություններով», որ «Արտահանեալ ի զրոյց թուրքաց և շարադասեալ ի միտմ տփի կարգաւ հայկական ալբուքներէ... յամի փրկութեան մերոյ 1764 և ի Հայոց ՌՄԺԿ ի նոյեմբերի 10-ին սկսեալ (երես 1) ...Յամի տետուն 1777 ղեկտեմբերի 29 աւարտեալ (եր. 476)»:

Բ. Կյուլեսերյանը ձեռագիրը նկարագրելիս փոստահարար գրում է. «Գեորգ Դպրի ալս կարևոր և իր տեսակին մեջ միակ գործը տպագրված է արդեն «Բառարան պարսկերէն», ինչպես նաև «Բառգիրք պարսկական լեզուի» անունով...»: Սակայն մի քիչ հետո նա, ըստ երևույթին ձեռագրի և տպագրի միջև անհամապատասխանող տեղեր գտնելով՝ կասկածում է նրանց նույնությունը և գրում «Ձեռագիր» թե ոչ ձեռագրիս օրինակը գործածած է Հակոբ Տյուղլյան Դեորգ Դպրի բառգիրքը կատարելագործելու ատեն»¹: Այնուհետև Կյուլեսերյանը գիտել է տալիս, որ տպագրի առաջարանում Դպիրը հիշում է, որ ինքը 1795 թ. (= ՌՄԽԻ) հայերենի վերածելով՝ օգտագործել է Եահիգիի և Հալիմիի բառարանները: Հետևաբար 1777 թ. ավարտված բառարանը չէր կարող հիմք լինել տպագրի համար, որտեղ օգտագործված են ոչ չրջանում կատարված թարգմանություններ:

Տյուղլյանի հրատարակած Դպրի բառարանի հիմք համարվել է նաև մի ալլ ձեռագիր, որը Դեորգ Դպրի գրավոր ժառանգության հետ միասին գրանցվում է ս. Ղազարի մատենադարանում: Ձեռագիրը (թ. 23) խորագրված է «Բառգիրք պարսկական լեզուի», «թարգմանեալ լալադգական լեզուի ի հայկական տառ և ի լարամեան բարբառ...», որ գրված է «յամի տետուն 1771 ի սեպտեմբերի 28: Ի միջոցի երկուց ամաց»:

Ս. Ղազարի մատենադարանում պահվող Գեորգ Դպրի ձեռագրերի մասին տեղեկություններ հաղորդող Հ. Ա. Մանուկյանը ալս ձեռագիրն է հիմք համարել 1826 թ. տպագրված պարսկերեն-հայերեն բառարանի համար: Նա

¹ Այս ձեռագիրը Մատենադարանում գտնվելու փաստը սխալ մեկ հայտնեց բնկ. Հայկ Ամարյանը, որը ներկայումս պատրաստում է «Մատենադարանի XII-XVI դարերի բառարաններ» հետաքրքիր աշխատությունը:

Առաջիկայումս ըստ ամենայնի մենք կանդրադառնանք միջնադարի պարսկերեն-հայերեն բառարաններին:

² Բարկեն Աթոռակից Կաթողիկոս. Թուրքական ձեռագրաց Ղալաթիայ ազգային մատենադարանի հայոց, Անթիլիսս, 1961, էջ 407—408:

³ Անդ, էջ 400:

⁴ Մանուկյան Ս. Գեորգ Դպիր Տեր-Հովհաննեսյանի ձեռագիրները ս. Ղազարի մատենադարանին մեջ, «Բաղմավեպ», 1957, էջ 168:

գրում է, որ այդ ձեռագիրը ժողովին հրատարակված է ժաշխատութեամբ և ուղղագրելով և համառօտ քերականութեամբ ի Յակոբայ Տիւղեան՝:

Հարգելի բանասերը նուէնպես թշուրիմացութեան մեջ է. 1771 թ. ավարտված բառարանը չէր կարող բնագիր լինել տպագրի համար, թեկուզ միան հենց այն պատճառով, որ Դպիրը օգտագործել է ուշ շրջանում իր թարգմանած Շահիդիի, Հալիմիի և այլ բառարաններ⁹:

Գեորգ Դպրի պարսկերեն-հայերեն հայանի բառարանի ստեղծման մասին շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդված իր իսկ հեղինակի տառադարանում¹⁰: Այնտեղ ասված է, թուրք գործեալ աշալուրջ հայեցողութեամբ գրեցի զմեկնութիւն ոտանաւոր գրոցն Գահիտի բանաստեղծին բառական, ի բարբառ և ի լեզու հայկական, ի թուականին ՌԻՄՊ [1795]: Ապա իսկ և իսկ գտեալ և այլ մատեան՝ այն ինչ նորոգ լորինեալ ըստ օրինակի գրոցն Գահիտի հեղինակին, զայն ևս ի նոյն լարեցի:

Եւ յետոյ տեսեալ միւս ևս գիրք ինչ հարուստ բառիւք, զոր ոտանաւորելով շինեալ, և թարգմանարար թուրքական բարբառով լորինեալ էր Հալիմի անուն ոմն ի թուականին հիճրէթին 850 [1446/47], զայն մատեան ևս ի հալ լեզու լեղեալ, կազմեցի եռամասնեալ մատեան բառից¹¹:

Շահիդիի և Հալիմիի, ինչպես և պարսից դասական գրողների բառապաշարի հիման վրա պատրաստված այս եռամասնյա մատանը, ինչպես վկայում է Գեորգ Դպրի կենսագիր Ա. Արվաղյանը, ղեկեա մինչև անցյալ դարի 90-ական թվականները գտնվել է Պոլսում Հովհաննես Արծրունու մոտ: Ա. Արվաղյանը տեսել է այդ 600 էջանոց աշխատությունը և անգամ նկարագրել է նրա տարրեր մասերի տիտղոսաթերթեր¹²:

Գեորգ Դպրի թարգմանած բառարանների նյութի և նրանց վրա գիտնականի կատարած աշխատանքների մասին հստակ պատկերացում է տալիս Երեվանի Մատենադարանի № 9699 ձեռագիրը, որը նուէնպես եռամասնյա մի մատան է: Այստեղ ամփոփված են Դպրի թարգմանած Գահիդիի, Վեհապիի բառարանները և պարսից ոճերի մի փոքրիկ հավաքածու: Այս մատանը 1823 թ. բնագրից բնագործնակել է ոմն տիրացու Դանիել¹³:

Ինչպես պարզ երևում է թե՛ Արվաղյանի նկարագրած ձեռագրում և թե՛ Մատենադարանի № 9699 ձեռագրում միայն համընկնում է Շահիդիի բառարանի առկալութեանը: Երկու ձեռագրերի այս համավածների տիտղոսաթերթերը ամբողջությամբ նույնն են.

Եթարգմանօրէն մեկնութիւն
տաղաչափական բառարանին
այնորիկ՝ որ կոչի
Գահիտի:

Ի լոյս ասեալ աշխատութեամբ Գեորգայ ուրումն

⁹ Անդ:

¹⁰ Տե՛ս Գեորգ Դպրի, Բառարան պարսկերէն, Բառաճարան հեղինակին, Լճ 18:

¹¹ Անդ:

¹² Անդ:

¹³ Տե՛ս Ա. Արվաղյան, Շար հայ կենսագրութեանց, Ա. հատոր, Լճ 24:

¹⁴ Այս ձեռագիրը երեան է հասել Թորոս Աղատյանի զիվանի հետ Ջեռաղրի Լճ 110ր գտնվող մի հիշատակութեանից տեղեկանում ենք, որ այդ մատանը Թ. Աղատյանը գտել է Ստ. Կուրտիկյանի գրքերի մեջ: Ձեռագիրս երեանի Մատենադարանում գտնվելու մասին սիրով մեզ հայտնեց բանասեր բնկ. Ա. Մնացականյանը:

մշականունն զպրի
 Ի մայրաքաղաքն Կոստանդինու-
 Պոլիս
 Ընդ հովանեաւ տաճարի սրբոյ հրեշտակապետի
 Երթալէլի՝ որ ի Պալատ:
 Յամի տեառն 1795 մայիսի 8¹⁴:

Արդ, իրենցից ինչ են ներկայացնում այս բառգրքերը և ինչպե՞ս է
 Դպիրը գրանք օգտագործել:

1. Շահիդիի բառգիրքը: Ինչպես վերը հիշվեց, Գեորգ Դպրի պարսկե-
 րեն-հայերեն բառարանում օգտագործված աղբյուրներից հեղինակային առա-
 ջարանում առաջինը նշված է Շահիդիի բառգիրքը:

15-րդ դարի թուրք բառարանագիր Եահիդին (875/1470 թ. — 957/1550)
 իսկական անունով Իբրահիմ, Անատոլիայի Մենթեշի գավառի Մուղլայի գյու-
 ղաքաղաքից էր: Նա ապրել է Բուրսայում որպես մեվլևի (կամ՝ մաուլավի)
 աղանդի շեյխ, ունի մի քանի մեհենիներ և մի գիվան¹⁵: Նրա կազմած բա-
 ռարանը, որ հայտնի է *Şahîdî defter* «Թեհիդիի Շահիդի» («Շահիդու պար-
 դեր») վերնագրով, մի փոքրիկ մատյան է, որ մինչև 19-րդ դարի կեսերը մեծ
 տարածում է ունեցել թուրքախոս ժողովուրդների, հատկապես օսմանցիների
 մոտ և որպես դասագիրք օգտագործվել է դպրոցներում:

Գեորգ Դպիրը այս հեղինակի անձնավորութան, ինչպես և նրա բառա-
 րանի ստեղծման հանգամանքների ու բնույթի մասին համառոտակի խոսում
 է Շահիդու բառարանի թարգմանութանը կցած իր «Յառաջարանութին
 ինչ» բաժնում:

Շահիդին «որ ի մանկութենէ զեզերեալ ի վարժս ուսման, և եղեալ հր-
 մուս ի գիտութեան լեզուին պարսկական», — գրում է Դպիրը, — շարագրեաց
 զգիրս զայս բառական. մեկնելով զի՛նք որչափ մարթ էր բառիւք թուրքական
 լեզուին. և ուրէք ուրէք առ ի չգոյէ համապատասխան բառի ի թուրքական
 բարբառի, վարեցաւ արարիտեան ձաջիւ. և սակս գիւրընկալ լինելոյ բառիցն
 ի միտս ընթերցողաց, յօրինեաց զսոյն գիրս ոտանաւոր տաղաչափութեամբ.
 լինել նմանակ ոտանաւոր գրոցն Թէօհֆէ Հիւսամի կոչեցելոյ, որով ինքն
 վարժեալ էր ի մանկութեան իւրում, բաժանելով զսա ի պրակս կամ ի
 գլուխս 27. ընդ պէսպէս լանխաւորութեամբ և վանկաչափութեամբ... Եւ աշ-
 խատասիրեալ աւարտեաց զսոյն գիրս ի թուականին հիճրէթի 921 | 1515—
 1516 թ.)»¹⁶: Այնուհետև Դպիրը, նշելով բառարանին նշանակութիւնն ու կա-
 րեւորութիւնը, խոսում է իր կատարած աշխատանքի մասին. «Արդ՝ և ես
 Գեորգ անուն չնչին Կոստանդնուպոլսեցի պալատական հայեցեալ ի շահ օգ-
 տութեան մասնինս ախորիկ, լանձն առի աշխատութեամբ, և գրեցի զմեկ-
 նութիւն սորա գրոշմեալ ի քարտի հայկական տառագծութեամբ, ուր նախ
 զպարսիցն եղեալ՝ ապա զհայոցն, լետոյ զթուրքացն. և հուսկ լետոյ զարա-
 պոցն. որով եղև սա գիրք բառից լեզուաց և բարբառոց քառից. և այս ամե-
 նախ ի վալիս ուսումնասէր անձանց Հայկադունեաց. ի թուականին հայոց

¹⁴ Ա. Այվազյան, Շար հայ կենսագրութանս, Ա. հատոր, էջ 24: Երևանի Մա-
 տենագրարանի ձեռ. № 9699, էջ 3ա:

¹⁵ Տե՛ս Մատենագրարանի ձեռ. № 9699, էջ 4ա: Նուե՛ Hammer, Geschichte der
 Osmanischen Dichtkunst, vol. II, S. 258.

¹⁶ Մատենագրարանի ձեռ. № 9699, էջ 4ա:

ԻՒՄԽԻ (1795): Ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպօլիս, ի տեղեոջ անդ՝
որ կոչի Պալատ...»¹⁷:

Ինչպես ասվեց, Շահիդու բառարանը մեծ տարածում է ունեցել. ուստի
և միջնադարյան բազմաթիվ ընդօրինակություններ կան ցրված աշխարհի
շատ ձևագրատներում (Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Լենինգրադում
և այլուր¹⁸): Շահիդու բառարանի մի ընդօրինակությունը կա նաև Երևանի
Մատենադարանի արարատառ ֆոնդում՝ № 325, որը և օգտագործում ենք
մեր սույն աշխատանքում:

Այս բառարանը կազմված է ոչ թե՛ ալլոբենական կարգով բառահոգված-
ների մեկնություն սկզբունքով, այլ արևելյան բանաստեղծություն տաղաչա-
փական կարգի կիրառումով, ինչպես Իպիրն է ասում, «յանկաւորութեամբ և
վանկաչափութեամբ», որի հետևանքով և մատչանը բաղկացած է 27 հառ-
վածից, որոնք համապատասխանում են պարսից բանաստեղծության տաղա-
չափության 27 ձևերին, իսկ բառերը ցրված են ողջ բառարանում՝ նախած
նրանց վանկակազմիչ տարրերը որ ձևի տակ են ընկնում: Այսպես օրինակ՝
بغمبر (=մարգարև), توانگر (=հարուստ), کد (=մուրացկան) բառերը
օգտագործված են հետևյալ երկառոգում

هم دخی بغمبر اول کیم و دره حقش خبر بای توانگر در بو ضله دیر لر کدای

որ գրված է بحر سبط مثنوی مقبوض (պահր բասիթ մոսաման մակրուդ)
չափով և որի ֆոնմուլան է

مفتعلن فاعلن مفتعلن فاعلن¹⁹

Այս սկզբունքը կիրառված է հատուկ ուսուցողական նպատակներով,
կամ, ինչպես Իպիրն է գրում, «սակա դիւրընկալ լինելոյ բառիցն ի միտս
լինթերցողաց»²⁰: Բառարանադրական այս ձևը, որ երկար դարեր օգտագործ-
վել է արևելյան շատ գրականությունների մեջ, սխոլաստիկ ընույթ էր կրում
և միանգամայն մերժելի էր բնորդ Իպրի պես լուսավոր ու զարգացած գիտ-
նականի համար: Ուստի և տարօրինակ չէ, որ նա՝ չնայած ձևաքի տակ եղած
պարսկերեն բառաքերից շատերի տաղաչափյալ ընույթին, ընտրում է բա-
ռերը ալլոբենական կարգով տալու սկզբունքը:

Պետք է նշել, որ Շահիդիի բառգրքի թարգմանությունը սոսկ թարգ-
մանություն չէ, այլ, ավելի ճիշտ, նրա բառացանկից օգտվելու միջոց:
Խնդիրը այն է, որ Շահիդին մերթ պարսկերեն բառի դիմաց լոկ մեկ բառով
տալիս է թուրքերեն թարգմանությունը, ինչպես օրինակ՝

¹⁷ Անդ էջ. 4ր:

¹⁸ Catalogue des manuscrits et xylographes orientaux de la Bibliothèque Impé-
riale publique de St. Petersburg. 1852, p. 428—430; Die Arabischen, Persischen und
Türkischen Handschriften der Kaiserlich-Königlichen Hofbibliothek zu Wien... Wien,
1865; Catalogue of the Persian manuscripts in the British Museum. By Charles Rieu,
Ph. D. Keeper of the oriental Mss. V. II, 1881, p. 513; Die Handschriften-Verzeichnisse
der Königlichen Bibliothek zu Berlin. Berlin, 1888, S. 208; Catalogue of the Persian,
Turkish, Hindustani, and Pushtu manuscripts in Bodleian Library... part I, The Per-
sian manuscripts, Oxford, MDCCCLXXXIX, p. 999—1000; Catalogue des Manuscrits Per-
sians, par E. Blochet, Paris, MDCCCXII, p. 235.

¹⁹ Տե՛ս Երևանի Մատենադարանի արարատառ ֆոնդի ձև. № 325, էջ 4ա-4բ:

²⁰ Երևանի Մատենադարանի ձև. № 3690, էջ 4ա:

اسب ات و مادبان قصر غ وهم كره طای²¹

և մերթ թուրքերեն բառն է տալիս. ապա՝ նրա պարսկերեն թարգմանությունը. ինչպես օրինակ՝

ت پ و س و دله سكو كل بيا²²

Մինչդեռ Գեորգ Դպիրը նախ արաբերեն տառերով տալիս է պարսկերեն բառը, ապա դրա հայերեն առադարձությունը, աֆունհետ բառի հայերեն, թուրքերեն և արաբերեն բացատրությունները (վերջիններս հալատառ, իսկ լուսանցքներում մերթ ընդ մերթ նաև արաբատառ)։ Այս բոլորից հետո նա տալիս է բառի ստուգաբանությունը, երբեմն նաև նշում է, թե քերականական ո՞ր կատեգորիային է պատկանում։ Երբեմն մի երկու օրինակ, նույնությամբ պահպանելով ձևագրի պատկերը.

باراد

Պարան. անձրև. հագմուր. մադառ. և են ալն կաթիլքն օուրց որ տեղան ի յերկնից. բառ ալս է ընդունելություն ծագեալ ի բալէն Պարիտեն, որ է տեղալ և նշանակէ տեղացող, բալց յատկացեալ է ի նշանակել զանձրեն²³։

بغور

بغت

Շէշթա. վեցադի նուագարան. զանպուր. արապերէն ևս Դանպուր։ Այս բառ բարդեալ է յանուանցս՝ շէշ և թար. և նշանակէ վեցյարեան. որով՝ վասն թեթեւութեան ի բաց ընկեցեալ տառն՝ թէ ասացաւ շէշթա²⁴։ Հէմուհ. ուղեկից. ևսլաւ. բեֆիգ. բառս ալս բաղադրեալ է ի մասնկանէս Հէմ. և ի բառէս ոահ. և գիտելի է զի բաղադրական մասնիկս Հէմ. որ պատասխանէ հայերէն կից բառի. և թուրքականիս տաշ. նախադրեալ յանուանս պարսից, յուցանէ զկցորդություն. վասն զի հէմուհ նշանակէ զալն ոք, որ ի միասին է ընդ ումեք ի ճանապարհի և ուղեկից է նմա զորպիսին կոչեմք թուրքերէն ևսլաւ²⁵։

2. Վեհալիի պարսկերենից-թուրքերեն բառարանը։ Իր բառարանի համար աղբյուր ծառայած Շահիդիի բառարանը հիշատակելուց հետո Գեորգ Դպիրը, առանց հեղինակի անունը ստալու, խոսում է նաև մի այլ աղբյուրի մասին. նա գրում է. «Ապա իսկ և իսկ գտեալ և այլ մատեան՝ ալն ինչ նորոգ յօրինեալ քսո օրինակի գրոյն Շահիդի հեղինակին, զալն ևս ի նոյն յարեցի»²⁶։

Թե ալս նշումով Դպիրը ինչ բառարան է ակնարկել, տեղեկանում ենք Մատենադարանի № 9699 ձևագրից։ Այստեղ Շահիդիի բառարանին հաջորդում է մի ուրիշ բառարան հետևյալ երկտող տիտղոսաթերթ-ծանո-

²¹ Երևանի Մատենադարանի արաբատառ ֆոնդի ձև. № 325, էջ 1ա։

²² Անդ։

²³ Երևանի Մատենադարանի ձև. № 9699, էջ 7ա։

²⁴ Անդ. էջ 8ա։

²⁵ Անդ. էջ 10ա։

²⁶ Գեորգ Դպիր. Բառարան պարսկերէն և արաբարան հեղինակին, էջ 48։

թագրությամբ՝ «Այլ բառարան իմն նորոգ յօրինեալ»²⁷, Սրան հաջորդող «Յառաջարանութիւն ինչ»-ում Դպիրը հետեւյալն է պատմում իր այս աղբյուրի հեղինակի մասին:

«Գործս այս, — գրում է Գեորգ Դպիրը, — է աշխատութիւն ալլոյ ուրուք հեղինակի Վէհպի անուն... Ի թուականին հիճրէթին 1197 [1197/1783] արաբեալ է նորոգապէս դհաւաքումն մեկնութեան պարսկական բառիցս ալսոցիք ի թուրքաց բարբառ՝ ոտանաւոր չափմամբ, նմանակ իմն գրոցն Շահիտի բանաստեղծին»²⁸:

Այս ձեռագրի տվյալների համադրումը տպագիր բառարանի վերը բերված առաջարանի տվյալների հետ կասկած չի թողնում, որ Դպրի երկրորդ աղբյուրը Վեհպիի բառարանն է եղել:

Վեհպի Սուեքուլ-Չադեն բուն անունով Մուհամմադ իբն Ռաշիդ, բնիկ Մարաշի էր: Նա հաստատված է եղել Կոստանդնուպոլսում և 18-րդ դարի երկրորդ կեսին ժամանակի Սուլթան Աբդուլ Համիդի կողմից դեսպանությամբ ուղարկվել է Պարսկաստան: Նա շրջել է երկրի բազմաթիվ քաղաքներում, երկար ժամանակ ապրել է Շիրազում և հիմնավորապես ուսումնասիրել պարսկերենը: Վեհպին իր բառարանում բացի այն, որ օգտագործել է «Շահիդիի բառարանի նյութը, ավելացրել է նաև զգրագրութիւն ալլես պիտանի և հարկաւոր բառից, որք ո՛չ դտանին ի դիրս նորա (իմա՝ Շահիդիի)»²⁹:

Դպիրը այս բառարանը ևս թարգմանում է հայերենի: Այս կապակցությամբ ինքը թարգմանիչը գրում է, որ տեանելով Վեհպիի բառարանը, ընդդեմ դեղեցիկ շարակարգութիւն բառից նորին լոյժ ախորժացեալ՝ կամեցալ լաւելլով ի նոյն բառս հայերէն ի մեկնութիւն նորուն, լեզու ի հայկական տառ և առնել գնոյն դիրք իմն պատական և պայծառ: Վասն լորոյ լեղաշրջեալ ի դարգ վալելութեան Արամեան լեզուի. վալելուչ իմն յօրինեցի զնա ի վալելու ուսումնասէր անձանց մերազնէից, որ է առաջիկալ գիրքս այս. ևս Դէորդ շնչին Դպիր Կոստանդնուպոլսցի, որդի տեառն Յօհաննու քահանայի ի աէր հանգուցելոյ: Եւ այս պատահակաց ի թուականին հայոց ՌՄԽԳ (1794) յամսեանն լուսիսի...»³⁰:

Թվում է, թէ այստեղ գրիչ Դանիելը արտագրության ժամանակ շփոթել է Դ-ն Գ-ի, որովհետև Շահիդիի բառարանը, որը Դպիրը ավելի շուտ է թարգմանել, կրում է 1795 (ՌՄԽԳ) թվականը: Հավանաբար Վեհպիի բառարանը, որը ծավալով մի փոքրիկ գրքույկ է, թարգմանվել է նույն 1795 թվականին:

Վեհպիի բառարանի մի քանի ընդօրինակությունները պահպանվում են Լոնդոնում ու Վիեննայում³¹: Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատանը A 1565 թվանամարի տակ պահպանված է **تجدید و ترمیم** «Թեոհիմի Վեհպի» (Վեհպիի պարզեղծ) խորագրով մի ձեռագիր, որը ղժախտաբար պակասավոր մատյան է, ավելի ճիշտ տարբեր թերթե-

²⁷ Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 64ա:

²⁸ Անդ. Լջ 64բ:

²⁹ Անդ:

³⁰ Անդ:

³¹ Die Arabischen, Persischen und Türkischen Handschriften der Kaiserlich-Königlichen Hofbibliothek zu Wien... Wien, 1865, S. 143; Catalogue of the Persian manuscripts in the British Museum. By Charles Rieu... V. II, 1881, p. 515.

րից բաղկացած թուրքերեն մի քասիդե է: Էջ 1-ը բառարանի սկիզբն է, որը խառնվել է քասիդեի թերթերին և կազմվել է այս մատյանում:

Վեհալի բառարանը նույնպես չափածո է: Հեղինակը այն կազմել է Շահիդիի նմանողությամբ, բայց հարմարեցնելով «բոս կարգի վերջավորութեան արաբիական տառից»³¹:

Գեորգ Դպիրը Վեհալի բառարանը նույնպես բառացի չի թարգմանել, այլ միայն օգտվել է նրա բառապաշարից ու թուրքերեն բացատրություններից: Այս թարգմանությունը, որ ընդգրկում է № 9699 ձեռագրի 64ր—111ր էջերը, մատուցված է հետևյալ ձևով. նախ հայատառ տրվում է պարսկերեն բառը, ապա նրա թուրքերեն (հայատառ) և այնուհետև հայերեն նշանակությունները: Անհրաժեշտության դեպքում բառերը ստուգարանվում են, հատկապես նշվում են դերբայների կազմության ձևերը, բայերի տարրեր եղանակները.

Այսպես օրինակ.

Տանա. պիլիճի. գիտակ. գիտոզ և է սա ներգործական ընդունելություն Տանիսթէն բային. որ է գիտել. պիլմէք. (էջ 65ա):

Փէրրէնտէ. ուշըճի. թոչոդ. և է սա չէզոքական ընդունելություն փէրրիլտէն բային, որ է թոչել. ուշմագ. որոյ հրամայականն լինի փէրր. և ապառնին փէրրէտ. և գիտելի է, զի ձայնս ևնտէ, որ է վերջամասնիկ ընդունելութեան յարեալ առ իւրաքանչիւր հրամայական բայ, ծագի ընդունելություն ներգործական կամ չէզոքական. որպէս ակներև տեսանի. (էջ 66ա):

Կիւղէրանիլտէն. կիւչիւրմէք. անցուցանել. հրմ. կիւղերան և ապառնի. կիւղէրանէտ և է սա անցողական կիւղէշթէն բային. (էջ 78ա):

3. Հալիմիի պարսկերեց-թուրքերեց բառարանը: Երրորդ հեղինակը, որի բառարանը աղբյուր է եղել Գեորգ Դպրի համար, Հալիմին է:

Լուծֆուլլահ իրն Աբի Յուսուֆ ալ-Հալիմին 15-րդ դարի թուրքականավոր բառարանագիրներից է: Սրա բառարանը զգոր ոտանաւորելով շինեալ, և թարգմանարար թուրքական բարբառով յօրինեալ՝ գրված է հիճրէթի 850 (1446/47) թվականներին և մեծ տարածում է ունեցել: Ներկայումս նրա թագմաթիվ ընդօրինակություններն ու տարբերակները կան Լոնդոնում, Բեռլինում, Փարիզում, Լենինգրադում և այլուր³²:

Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատանը պահվում է Հալիմիի բառարանի ձեռագիր մի օրինակը (№ В 554), որը ոչ թե չափածո է, այլ արձակ: Այստեղ բառերը դասավորված են արաբական այբուբենի կարգով: Բառարանը սովոր մի գիրք է՝ բաղկացած 148 մեծագիր թերթերից: Այս բառարանի կարևոր առանձնահատկություններից և միաժամանակ առավելություններից են բառերի քերականական կատեգորիաների նշումները և հատկապես միջնադարյան պարսիկ գրողներից

³¹ Մատենադարանի ձեռ. № 9699. էջ 64ա:

³² Catalogue des manuscrits et xylographes orientaux de la Bibliothèque impériale publique de St. Petersburg, 1852, p. 431—435; Die Handschriften-Verzeichnisse der Königl. Bibliothek zu Berlin. Berlin, 1888, S. 206; Catalogue of the Persian Turkish, Hindustani, and Pushtu manuscripts in Bodleian Library... p. 1, The Persian manuscripts, Oxford, MDCCCLXXXIX, p. 999; Catalogue des manuscrits Persans, par E. Blochet, Paris, MDCCCXII, p. 224.

կատարված վկայությունները: Բերենք մի քանի օրինակ մեզ ծանոթ Լե-
նինգրադյան արձակ տարրերակից.

آباد شین معمور معناسنه... شمس و خوری
ذکر اخاد بدین بادشاه باد آباد
که کرد ملک جواهر ا بعدل داد آباد³³
آمین امجدتن لفظیدن مشتقندر اسم مصدر استعمال النور قارشق
معناسنه و صیغه امر و بعضی ترکیبیلر ده صفت استعمال
النور شکر آمینر کمی³⁴
برزگر اکفجی حارث معناسنه... انوری
کار خالد جز بجعفر کی شود هر کر تمام
کاس یکی جلاهیکی داند ذکر برزگری³⁵.

Հալիսիի այս բառարանի դպիրյան թարգմանության բնույթի ու կառուց-
վածքի մասին տեղեկանում ենք իր՝ Դեորգ Դպրի հիշատակագրությունից,
որ կցված է եղել թարգմանությանը որպես առաջարան և որը 1893 թ.
հրատարակել է Ա. Ալվադյանը՝ քաղելով Հովհաննես Արծրունու մոտ պահ-
պանված մի ձեռագրից. «...Հեղինակն գործույս Հալիսի անունը,— գրում է
Դպիրը,— յօրինեալ շարադրեաց զայս գիրս մեկնութեան բառից ոտանաւոր
չափմամբ ըստ պէս պէս վերջաւորութեան զանազան վանկից և տառից. բո-
ւանդակեալ զնոսին ի գլուխս 24. և զետեղեալ ի սմին մատենի գլուխու-
թիւն պարսկական բառից, մեկնեաց զնոսին թուրքական լեզուաւ յորում մին-
չև ի գլուխն իննետասաներորդ՝ շարակարգեաց մի միայն գլոգնախուռն
գումարութիւնս անուանց, և ալլոց մասանց բանի, բաց ի բալէ: Եւ անտի
մինչև ի գլուխն 23, զիմրաւորութիւնս բալից: Եւ ապա ի 24 երրորդում
պիսի կարգեաց բանս ինչ ուսանելիս ըստ ոճոյ քերականութեան խրատու:
Ստույլով ի նմա զձեակերպութենէ դիմաց անցելոյ ամանակին բալից, և զկազ-
մութենէ հրամայական եղանակին, նաև ապառնի և ներկա և անկատար
ամանակաց: Եւ զընդունելութեանց կրաւորականաց և կրաւորակերպ չէզոքա-
կանաց, ալլև ներգործականաց և ներգործակերպ չէզոքականաց և դանուանց
բալածականաց, և զբալից անցողականաց: Նաև զհոլովակերտ նախադրութեանց և
զվերջաւորութեանց ածանցականաց, և զլոգնականակերտ մասնականց, անուանց,
և ևս զբաղադրական մասնականց, որք դնեն յառաջս բալից և զլծորդութեանց
բալից, թէ էականաց և թէ արտակալականաց, և աւարտեաց զսոյն ի թուա-
կանի հիճրէթին 850...

Արդ ընթերցեալ զմատենանս զայս, կարի իմն ախորժելի թուեցաւ ինձ
վայելուչ կարգաւորութիւն բազմահոլլ բառից սորին, և կամեցեալ լեզու
զսոյն ի հալ բան, սկիզբն արարի գրել, և յաւարտ հասուցեալ կատարեցի
սղնականութեամբն Աստուծոյ մի միայն զրառս մատենին ըստ կարգի քա-
ղեալ և ոչ զոտանաւորացն փոյթ ինչ արարեալ... և այս պատահեաց ի
թուականին հալոց ՌՄԽԴ (1795), յոգոստոսի 24³⁶:

³³ Ասիայի ժողովուրդների Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատան № В 554
ձեռ., էջ 26:

³⁴ Անդ., էջ 9:

³⁵ Անդ., էջ 296:

³⁶ Ա. Ալվադյան, Շար հայ կենսագրություն, պրակ Ա., էջ 27—29:

թիւն՝ կորուստ գործէ ժամու և ժամանակի յորմէ ձանձրութիւն հետեւալ ուսանողին՝ տաղտապի և լքանի»⁴⁰:

Այս իսկ պատճառով էլ նա հետեւում է բառապաշարը ըստ այբբենական կարգի դասավորելու վաղուց անտի հայ բառարանագրութեան մեջ ընդունւած սկզբունքին:

Յուրաքանչյուր բառահոգւած հետեւյալ պատկերն է ներկայացնում. նախ տրվում է պարսկերեն գլխաբառը հայերեն նշանագրելով, ապա նույնը արարերեն տառերով, այնուհետև բառի հայերեն ու թուրքերեն (հայաստան), երբեմն նաև արարերեն ու չազաթալերեն (հայաստան) նշանակութիւնները: Բառարանի մեջ պարսկերենը տրված է թուրքական արտասանութեամբ, մի հանգամանք, որ այս ինքնատիպ ու արժեքավոր աշխատութեան պակասութիւններէն է:

Պրոֆ. Հր. Աճառյանը, բարձր գնահատելով Դեորգ 'Իպրի բառարանը որպէս առաջին պարսկերեն-հայերեն տպագիր բառարան և որպէս համեմատաբար զուտ պարսկերեն բառերի հավաքածո, գրում է.

«Որքան որ Գեորգ 'Իպրի բառարանը գովելի է, այնուամենայնիւ ունի մի քանի հիմնական թերութիւններ: Ամենից գլխավորն այն է՝ որ բառարանը հայերեն տառերով է. մի որեւէ պարսկերեն բառի նշանակութիւնը իմանալու համար՝ նախ պիտի իմանանք նրա ընթերցումը, և հետո հայերեն տառերով նույնը փնտրելով բառարանի մեջ, գտնենք նշանակութիւնը... Երկրորդ՝ որ Գեորգ 'Իպրի պարսկերեն բառերը կարդում է օսմանյան արտասանութեամբ... և բառերը շարելով այս արտասանութեան հայերեն ստանդարտութեան համեմատ, չափազանց դժուարացնում է բառարանի գործածութիւնը նրանց համար, որոնք տարբեր արտասանութեան են վարժված: Ահա այս տեսակետով Դեորգ 'Իպրի պատմական աշխատութիւնը պետք է համարել արդեն անբաւարար...»⁴¹:

Հաճախ բառահոգւածները վերջում ունեն պարսից ականավոր գրողներից վկայութիւններ, որոնք ցույց են տալիս տվյալ բառի գործածութիւնը զրականութեան մեջ: Սա մի նորութիւն էր մեր բառարանագրութեան մեջ և որպէս այդպիսին կանխում էր Հայկազյան բառարանին (1836 թ.), որտեղ վկայութիւնների ձևը կիրառված է ավելի կատարելագործված⁴²: Բառարանում այս վկայութիւնները մերթ ընդ մերթ թարգմանված են հայերենի⁴³:

⁴⁰ Գ և ո ր Գ 'Ի պ ի ր. Բառարան պարսկերէն, Յառաջաբան հեղինակին, էջ 48:

⁴¹ Բառարան պարսկերեն - հայերեն, Կազմեց Քարեղին քահ. Հ. Կիրակոսյան: Ձուգա — Սպահան, 1933: Հ. Աճառյանի «Հառաջաբանը», էջ Vlll—IX:

⁴² Մխիթար Արքայի բառարանում («Բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1740) առանձին բառերի տարբեր առումների համար հղում է արվում միջնադարյան մեր հեղինակներին ու աղբյուրներին՝ առանց խոսքի մեջ բառի օգտագործման օրինակներ բերելու:

⁴³ Մենք հակամետ ենք կարծելու, որ 'Իպրի թարգմանաբար ավել է բոլոր վկայութիւնները, սակայն բառարանի հրատարակիչ Հակոբ Տյուգյանը հավանաբար հրատարակութիւնը արագացնելու և կամ տպագրութեան ծախսերը կրճատելու նպատակով հանել է այդ թարգմանութիւնները, դրանք համարելով թերևս «կրկնաբանութիւն»: Այս ենթադրութեան համար մեզ կոպան են հանդիսանում բառարանի առաջաբանում հրատարակչի արած վերապահումները. նա գրում է, որ ինքը հոգացել է «չապաւել զաւելորդ, զորս օրեր կրկնաբանութեամբ և ուրեք անխորոթեամբ մէջ բերել» (տե՛ս «Բառարան պարսկերէն», էջ [Ը]): Նկատելի է, որ բառարանի սկզբնական էջերում վկայութիւնները ավելի շատ են ու ընդարձակ, քան միջին և վերջին մասերում: Թերևս սրանց որոշ մասն էլ կրճատված, բեռնաթափված լինի վերոհիշյալ նպատակով:

Բերենք մի օրինակ. որը թեև բնդարձակ, բայց բառարանում կիրառված սկզբունքների բնորոշ ու գեղեցիկ մի նմուշ է.

«ԱԶԱՏ ձյ՛լ՝ Անկապ. պիզայտ: Եւ այս ես ի գործ ածի ըստ քանի մի նշանակութեամբ. զի ասեն ֆեյան պենտե՛ի ազատ. և ցուցանէ գերծեալ ի ծառայութենէ կապանաց: ԱԶԱՏ կոչի նաև Սերվն, ալսինքն նոճին: Եւ Սուսեճն ալսինքն շուշանն, և ցուցանէ զնոսա գերծ ի կապից և ի գոլոյ պատուեալ յոստ ինչ. ըստ այնմ Դի՞սք մեկվայ անքի օշատեք քիւնեա: Հեւշու սերվիւ սուսեճն ազատեք քիւնեա: Հեղինակ ոմն վասն Սուսեճին, որ է շուշանն. ԱԶԱՏ կոչէ. սակս լինելոյ նորա սոսկ և թափուր ի գունոյ և լեբանգոր: Ամենայն ծառ՝ որ ոչ ունի պտուղ, որպէս Սերվ և Սուսեճն, ԱԶԱՏ անուանեալ է: Գրեալ են և վասն ԱԶԱՏ անուանելոյ Սերվին ալսինքն նոճւոյն. զի մինչ յաւուր իմում Սիրահարն Մէճնուն վասեալ գոլով ի սէր Լէյլին, վարանեալ շրջէր. ահսանէ զի պարտիպան ոմն տապար հարեալ կամի հատանել զծառ մի նոճի բարձրահասակ, և նմանեցուցանելով հասակի Լեյլի կոչեցեալ տարիածուին իւրոյ, աղաչեալ զպարտիպանն և զնոյ զնոճին զայն առեալ. գերծոյց ի հատմանէ, յոյր սակս անուանեցին զնոճին զայն ԱԶԱՏ, և յետոյ անցմամբ ժամանակաց և բազում գործածութեամբ, անուն եղեալ է ամենայն նոճեաց: Գրէ և շարագրող գրոց Կիլիսթանին թէ Հաքիյմիքա փիւքսիյաճեա քի չեհտիյն տիրախքի ցամվեր քի խիւտա աֆերիյաճե քսք իւզերիւմեճն կերտանիյաճե. հիյչ Եեքրա ազատ ցե՛ խանտե, մեկեր սերվրա քի հիյչ սեմեր ցե՛ տարեա. կիւֆք տիյկեր տիրախքան կեանի սեմեր տարեճն. իւ կեանի պի պերկ իւ փեժմիւրտե. իւ սերվրա ցեմե վտգք խոււլ քսք իւ քազե իւ քեր. իւ իյն՝ սըֆաքի ազատեկեաճ քսք: Որ ալսպէս թարգմանի ի հայկական բարբառ: Զիմաստուն ոմն հարցին թէ ալսքան ծառք են անուանիք, զորս աստուած ստեղծեալ է և արգասաւոր արարեալ, բնաւ միումն ազատ անուն չէ կարգացեալ, և թէ ոչ՝ նոճւոյն, որ ամենին պտուղ ոչ ունի. պատասխանեալ ասաց թէ Այլք ի ծառոց մերթ պտուղ ունին և մերթ անտերե և թառամեալ են. և նոճւոյն լոլոր ժամանակն գեղեցիկ է և գալար և զուարճ. և ալս որակութիւն աղատականացն է: Սոչն հեղինակ ալլուր ասէ և դալս ինչ թէ. Պե սերվ կիւֆք Եեկի միյվե՛ի ցե մի արի, ցեվճապ տատ քի ազատեկեան քեհիտեք Ենտ: Ալսինքն ցնոճին ասաց ոմն՝ պտուղ ոչ բերեա. ետ պատասխան թէ ազատականք զատարկածեոն են: Դարձեալ ԱԶԱՏ է անուն ծառոյ իրիք որ լինի ի դաւառին Կիլանու, և է սա ծառ իմն բարձրահասակ և բարեճե որ բարձրանալ լերկրէ մինչև ի կանգունս վաթսուն կամ եօթանասուն. և ունի ուղէշս որպէս զծառն Սանեվաքի. և է մինչև ի ծալք իւր միաչափ հաստարութեամբ: Եւ ես է անուն տեսակի միոճկան. որ շատ լինի ի մէջ ծովուն Կիլանու: Նշանակէ դարձեալ և զտեսակ իմն ծառոյ լորոյ տերեւոյն կամ ի դալար ստուցն՝ և թէ ուտիցեն կենդանիք. առժամալս աստակին»⁴⁴:

Պարսից գրողներից Գեորգ Դպրի բերած օրինակները մեծ մասամբ բարդա-խրատական բնույթ են կրում: Սա հետաքրքիր մանրամասն է և ցույց է տալիս Դպրի ուսուցողական նպատակները:

Գեորգ Դպրի բառարանը հարուստ է նաև քերականական գիտելիքներով: Որպես կանոն արվում են պարսկերենի անկանոն բայերի հրամայականն ու ապանին. օրինակ.

⁴⁴ Գ և ո ղ Դ պ ի ը. Բառարան պարսկերէն, էջ 31

Արաւսքէն آراستن Ջարդարեւ... Հրամայական Արայ. և ապառնի Արայեա (էջ 33):

Էֆրուխքէն آفر و ختن Լուցանել զկրակ և զճրագ... Հրամայական էֆրուզ. և ապառնի էֆրուզեա (էջ 106):

Թաֆքէն تافتن Ջերմանալ և ջերմացնել... նաև ոլորել... Եւ դարձուցանել... Հրամայական Թապ. և ապառնի Թապեա. և ի հրամայականէ աստի բղիթի ալլ աներևոյթ, որ է Թապիյաեմ. և զնոյն նշանակէ (էջ 112):

Սախթէն ساختن Կազմել, ալսինքն շինել... (Հրամայական սադ. և ապառնի սազեա) (էջ 465):

Ֆիւրուխքէն فروختن Վաճառել... (Եւ ըստ այսմ լինի հր. Ֆիւրուշ և ապ. Ֆիւրուշեա): 2. Լուցանել... (Եւ ըստ այսմ հրամայականն լինի Ֆիւրուզ, և ապառնի Ֆիւրուզեա, և ներգործական ընդունելութիւն Ֆիւրուզեմեա)... (էջ 708):

Էրբեմն որպես բառագլուխ բերվում է բայի հրամայական ձևը: Այս դեպքում անպայման նշվում է անորոշ դերբայը. օրինակ.

Միյլ میر է հր. Միւրտէն [մեռնել] բային. 2. Իշխան, գլխաւոր ժողովրդեան. (և ըստ այսմ է համառոտեալ յարարացւոց էմիյր բառն)... (էջ 307):

Միտին مى (Հրամայականն Տառէն բային) Տուր... ասի և Պիաին (էջ 308):

Պարսկերենում կան բայեր, որոնց անցյալ ժամանակի երրորդ դեմքը օգտագործվում է որպես անորոշ դերբայ: Նման դեպքերում նպիւրը անպայման ծանոթագրութիւնն է տալիս այդ մասին. օրինակ, նշելով զատ (زاد) բառի տարբեր իմաստները, նա գրում է. «է՛ անցեալ ժամանակի երրորդ դեմն Զատէն բային, և նշանակէ ծնաւ... որ և մերթ ի գործ ածի ի տեղի աներևոյթ բայի. զի ասի Մի թիւումեա զատ. ալսինքն կարէ ծնանիլ» (էջ 54—55):

Առանձին դեպքերում բառարանում նշված է նաև բայերի սեռը. օր.

Արախիյտէն آراخیدن Նոյն է ընդ Արամիյտէն. դադարիլ կամ հանգչիլ... որոյ անցողականն Արախանիյտէն. լինի... (էջ 32):

Միյրտնիյտէն مير انیدن (անցող. Միւրտէն բային) Մեռուցանել... (Հրամայական Միյր սն և ապառնի Միյրաեա) (էջ 307):

Դերանունների ուղղական, տրական ու հայցական հոլովները բերվում են որպես առանձին բառեր, իհարկե համապատասխան նշումով. օր.

Մեմ میر (Դերանուն էական առաջնոյ դիմի). Ես... (էջ 299):

Մերա مرا է տրական, և մերթ հայցականն դերանուանս Մեմ (էջ 302):

Մա ما է յոգնականն Մեմ բառին (էջ 289):

Մարա مرا է տրականն ու հայցականն՝ Մա բառին (էջ 295):

Որոշ դեպքերում որպես առանձին բառեր են բերվում որակական ածականների բաղադրական ու գերադրական աստիճանները. օր.

Պիմ ده բարիոք, բարւոք... (էջ 440):

Պիմթեր بهتر (բաղադրականն բառին Պիմ)... (էջ 440):

Պիմթերին بهترين (գերադրականն բառին Պիմ)... (էջ 440):

Սախթ ساخت խիստ, կարծր կամ պինտ... (էջ 465):

Սախթթեր سحتر (բաղդատական Սախթ րաոին) Խստագոյն... որոյ գե-
րադրական լինի Սախթթերիյն, որ է ևս խստագոյն (էջ 465):

Բառարանում հանդիպում ենք նաև բաղմաթիվ ստուգարանութլուննե-
րի, որոնք հիմնականում ձիշտ են. օրինակ.

Խուռչիյտ خورچيوت. Կամ Խօրչիյտ. Արեգակն. Կիւնեշ. արապերէն
Շեմա: Ի բարդեալ ի բառիցս Խուր, որ է կրճատեալ ի Խուրի բառէս, որ նշ-
լոյս՝ ըստ փէհլէվեան բարբառոյ և Շիյա՝ արև (էջ 208):

Ջիյն زين նշանակէ թամբ... Լև ընդ այսմ է սա պարզ բառ: Դարձեալ
բառս Զիյն. գոլով բաղդադրեալ՝ է ասի, Յայամանէ դի է բաղկացեալ ի
սկզբնականի նախդրէս Զի, և ի ցուցական անուանէս Իյն (էջ 69):

Էծտեքիա عطرة Բառս այս նախագոյն էծտեր է. ընդ որում յարակ-
ցեալ զլոգնականացուցիչ վանկս Է Հա, ալնպէս ի գործ ածեն. բայց ո՛չ է
լոգնական, այլ եզական և նախ նշանակէ մեծ օձ. վիշապ. ասի թէ բնակա-
նարար կեանք օձին ժամանէ մինչ ի հազար ամ, որում եթէ մնաս ինչ ոչ
հասանիցէ՝ շատ ապրեալ վիշապանայ. և ոտք երևին ի նմա: 2. Այր կորովի
սրտեղ, և բարկացոտ... 3. Թագաւոր անիրաւ հասարակօրէն. և յաակարար
նշանակէ զԶեհաք. և ըստ այսմ էծտեքիա է, զորոյ գԺէ տառն բարձեալ, Է-
տեքիա ասացին: 4. Մահիկն դրօշակին... և այս յայն սակս, զի ալն որ է ի
զլուի դրօշակին, լինի յաճախ վիշապատեսիլ (էջ 79):

Եթէ բառի ստուգարանութլունը հստակ չէ, կամ Դպիրը կասկածում է
իր աղբյուրների ճշգրտութլանը, ապա բերում է այդ ստուգարանութլունը
նշելով աղբյուրը. օրինակ.

Աֆիթապ افيطاب Արեգակն. [թուրքերէն] Կիւնեշ. արապերէն Շեմա:
Քէմալիաշաղատէն ստուգարանեալ զբառս զայս ասէ թէ Աֆիթապ է բառ
բարդեալ. բայց բարդութիւն նորա ոչ է յայտնի որպէս Խօրչիյտ. այլ ան-
յայտ. որոյ մի մասն է Աֆ. որ բունն է ԱՊ. Պէ ի Ֆէ փոխարկեալ. և մի
մասն է Թապ. որ և հր. Թաֆթէն յային. և ի թարգիլն նշ. իբր ընդունելու-
թիւն ջերմացուցիչ... և ի զօրութենէ բարդութեան նշ. ջերմացուցիչ ջրոյ և
քանդի ջուրն ըստ մնութեան իւրում ցուրտ է, և ջերմանալն նորա է ա-
տահական. և յայն սակս զջերմութիւն նորա վերաբերեալ են առ արեգակն և
կոչեալ զնա Աֆիթապ (էջ 36):

Բառը փոխառեալ լինելու դեպքում անպայմանօրէն նշվում է փոխառու
լեզուն. օրինակ.

Ա՛ղղար. عطار Բառ արապերէն. վաճառող մշկոյ բուրկենի, և նման նո-
ցին անուշահոտ իրաց. զի է բառս այս ընդունելութիւն [իմա՝ դերբալ] ծա-
պեալ ի բառէն عطر ք՛ղր, որ նշանակէ անուշահոտ բուրումն. զոր առհասա-
րակ վրիպական գործածութեամբ ասեն զվաճառող է դեղոց, խոտոց, և ար-
մատոց, և ալլոց մանրամասնեալ իրաց: Լև բառս Ա՛ղղար բուն պարսկերէն
ասի Պույֆիւրուշ... (էջ 1):

Նամնի نامجي է բառ խարէզմի, և նշանակէ ձիարած, այսինքն հո-
վի երիվարաց... զի նամ նշանակէ ձի (էջ 45):

Արդ Գեորգ Դպիրը իր բառարանը կաղմելիս ինչպե՞ս և որքանո՞վ է
օգտվել աղբյուրներից:

Մի խումբ լատերի համեմատութլունը մեր ձեռքի տակ առկա Դպրի

աղբյուր-բառարանների հետ, բերում է աճն եզրակացություն, որ 'Իհորդ 'Իպիրը' հիմնականում օգտվելով այդ բառարանների բառացանկից, մեծ ու բրտնաջան աշխատանք է կատարել ճշտելու յուրաքանչյուր բառի տարբեր առումները, նշելու քերականական անհրաժեշտ տեղեկությունները, բերելու խոսքի մեջ տվյալ բառի օգտագործման օրինակ-վկայությունները:

'Իպրի աղբյուրներից Շահիդին ու Վեհպին պարսկերեն բառի զիմաց տալիս են նրա թուրքերեն մեկ իմաստը, նշանակությունը, մինչդեռ Հալիմի բառարանը այս առումով ավելի հարուստ է. այստեղ բառի համար մի քանի նշանակություններ են տրվում, բացի զրանից բերվում են վկայություններ ու քերականական տեղեկություններ: Հավանաբար 'Իպիրը այս վերջին աղբյուրից ավելի օգտված լինի: Իսկ, այնուամենայնիվ, 'Իպրի բառահոգվածները ավելի հարուստ են. մի բան, որ ինքնին պերճ ապացույց է պարսկերեն-հայերեն տպագիր այս առաջին բառարանի ակնբախ ճոխության ու առավելության: Մի քանի բառերի զուգահեռ համեմատությունը ակնառու կերպով հաստատում է այս փաստը:

شاهدی («Շահիդիի պար- զեր») ¹⁵	Շահիդիի զպիրյան թարգմանու- թյունը ¹⁶	Վեհպիի զպիր- յան թարգմ. ¹⁷	لغت حلبی («Հալիմիի բա- ռարան») ¹⁸	Գեորգ Իպրի «Բառարան պարսկերեն» ¹⁹
صوآب («Սու. ապ»)	Ապ. ջուր. սու. մա	Ապ. սու. ջուր. ա. բապ. մա	آب سو و روم تاریخین بر ایک ادب. که اعستوس دیگله معروف و مشهور در Ապ. սու. հոս- մական պատ- մությունից մի ամսի անուն է, որ Օղոստոս անունով է հայանի:	Ապ. آب Զուր. Սու. արապերեն Սա. 2. Պայ- ծառություն. Բելնագ. 3. Շնորհ և վայելչություն. Լեղաֆէթ. 4. Արժանաւո- րություն և համարումն. Գասթ վէ իթիպառ: 5. Ճա- րագ և սարաս. Իբարգ վէ ռէվիշ: 6. Կամք սրտի. Միւտատ: 7. Շաւիդ, այ- սինքն կերպ. Գարիգ. զի ասեն Պէր ապի ֆէլաս. այսինքն ըստ շաւղի այս ինչ ժարգոյ. ֆէլանք յարիգիքէ: 8. Ամիսն օ- ղոստոս, որ է վերջին ա- միսն ամառան. Աղոստոս:

Նկատելի է, որ առանձին զեպքերում 'Գեորգ 'Իպիրը ընդարձակ հափ-
լումներ է կատարել Շահիդիի այս կամ աճն բառի թարգմանություն ժամա-
նակ, բայց իր բառարանը կազմելիս հրաժարվել է իր իսկ ավելացրած շատ
մանրամասներից. սա թերևս բացատրվի բառարանը շատ չժանրաբեռնելու
միտումով. այսպես օրինակ.

¹⁵ Մատենադարանի արարատառ ֆոնդի ձև. № 325, էջ 3a:

¹⁶ Մատենադարանի ձև. № 9899, էջ 10—ա:

¹⁷ Անդ, էջ 68ր:

¹⁸ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադյան լուսամանուկի ձևագրա-
տան ձև. № B 554, էջ 26:

¹⁹ Գեորգ Իպրի, Բառարան պարսկերեն, էջ 22:

تحت شاهدي («Շահադիյի պար- զիլ») ⁵⁰	Շահադիյի պարզա- թարգմանությունը ⁵¹	Վեհապի պարզա- թարգմ. ⁵²	لغت حليمي («Հալիմիի բառա- բան») ⁵³	Գեորգ Դպրի «Բառարան պարսկերէն»
اکثرى برزگر [«Երկնքի, պարզի- կեր»]	Պէրզգիկէր. սերմ- նացան կամ մշակ- էրինքի. չիֆթէի. արապերէն հար- բաս. էքքեար. զէր- բա. և ֆէլլահ. Օւ- գիտելի է գի վերո- դրեալ բառն՝ պէր- զիկէր է բաղադրե- նալի բառէն՝ պէրզ, որ նշանակէ սերմ. թուխում. և ի մաս- նը կանես կէր. որ թեթեւացեալ է ի բառէն բնար որ է զործ. և ի յարիւն իւրում յանուն ինչ զուցանէ զզործողն նորին. որպէս Ա- հէնկէր՝ երկաթա- զործ. Ջէրկէր՝ ոս- կէզործ. Բէֆշկէր՝ կոշկազործ. բոտ այսմ է և բառն պէրզիկէր որ է սերմնազործ, սերմ- նատան:	Պէրզ- կէր. է- րինքի. սերմնա- ցան, Պէրզկէր. էրինքի. հա- բաս	برزگر اکثرى حارث Պէրզկէր. էրինքի. հա- բաս	Պէրզիկէր Երզնէր. սերմ- նացան. Էրինքի. արապե- րէն Բրաւ Զէրբա. և ուէն Զարաս. ասի նաեւ Հարիս. ասի և Ապլիյէ, Ապլիյթէ, Ապլիյ- սէ, Եադի, Էպլիյէ, Էպլիյ- թէ, Էպլիյսէ, Նէոստի, Պէրզեար, Պէրզէկէր, Պէրզ- կէր. Պէրզի. և Բիշափէրպ:

Գեորգ Դպրի բառարանը արժեքավոր է նաեւ իր հանրագիտակ բնույթով. այստեղ բացի սոսկ պարսկերէն բառերի նշանակութիւններից հարուստ նյութ է մեջբերված արեւելյան ժողովուրդների բանահյուսութիւնից, տեղեկութիւններ ու ծանոթագրութիւններ են տրված պարսից դրականութեան մեջ չիղված վիպական ականավոր հերոսների մասին, կենսագրական ամփոփումներ են բերված միջնադարյան աշխարհի խոշոր բանաստեղծների և դիտանականների վերաբերյալ, ինչպիսիք են Դիրգուսին, Աբու Ալի Իրն-Սինան, Օմար Պալամը, Շերեֆեդդին Շիրազին, Սաադին, Հաֆիզը և ուրիշներ: Բանահյուսական նյութերից բերենք թեկուզ մի երկու օրինակ, որից առաջինը հիշեցնում է «Ախթամարի» զոդարիկ դրույցը, և հավանաբար սրա պարսկերէն տարբերակներից մեկն է:

«Էնաէրու... է անուն առն միոջ որ սիրահարեալ ի զեղ կնոջ ուրույ
Հարունէ կոչեցելոյ. (որ էր կին առն միոջ Հարու անուն և բնակէր ի կղզւոջ
իմիք Հար անուանեալ) անկողնաւոր. ուր ի բազում դիշերս հուր լուցեալ
Հարունէ, և էնաէրու ի լոյս հրոյն ի լեղ անկեալ երթալ ի կղզի անդր և

⁵⁰ Մատենադարանի արաբատառ ֆոնդի ձեռ. № 325, էջ 52:

⁵¹ Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 10:

⁵² Անդ, էջ 74ա:

⁵³ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի լեհիզրագլան բաժանմունքի ձեռագրա-
տան ձեռ. № В 354, էջ 296:

⁴ Գեորգ Դպրի, Բառարան պարսկերէն, էջ 430:

տնտեսողներ ընդ հարունէի. բայց ըստ դիպաց ի գիշերի միում հողմ և անձրեւն զոլով սաստիկ զհուրն շիջուցեալ, և էնտերուս ի խաւարի մնացեալ ընկողմեցաւ»⁵⁵:

Ուշագրավ օրինակ է նաև Ֆարհադ ու Շիրինի մասին հետեւյալ պատկերը. «էնճարի ֆերհաւտ... է սա նոննի իմն. ալսինքն ծառ նոան. որ կալ ի լերինն Պիւսիւթունի. և առասպելեալ պատմեն թէ յորժամ առ ֆէրհաստ պատա մի եկեալ պատմեաց և թէ մեռաւ Շիրին. ի սէր որոյ հարեալ էր ֆէրհաստ. յաջնժամ և նա տապաւառն զոր ի ձեռն ունէր, հարեալ զգլուխ իւր՝ անկաւ և մեռաւ. և անկեալ տպա արիւնաշաղախ տապարն աւն, և մեղելո նորա վարսեալ ի գետին. և բուսեալ և աճեցեալ և տերևս արձակեալ. պրտդարեբեաց. և վասն զոլսլ փայտի նորա ի ծառոյ նոան, պատուղ անմահն նրոան յառաջացաւ ի նմանէ. զորոց զմին կորդեալ և ճեղքեալ, տեսին զի մէջ նորին ալլեցեալ և աճիւնացեալ էր ըստ նմանութեան սրտի սիրահարեցելոյ»⁵⁶:

Բառարանի գրական արժեքը էլ ավելի է մեծանում, եթե նկատի ենք առնում նաև միջնադարյան պարսից դասական գրողների ստեղծագործութիւններին, բարոյա-խրատական երկերին՝ այս կամ այն բառի կիրառումը գրավոր խոսքի մեջ ցուցադրելու նպատակով, կատարված բազմաթիվ մեջբերումները, որոնք բացի այն, որ բառարանից օգտվողին սովորեցնում են բառի ճշգրիտ օգտագործումը, ալլև հաղորդակից են դարձնում իրանական հարուստ բանահյուսութեանն ու գրականութեանը: Անհրաժեշտ է հիշել, որ բառարանում բերված մի շարք վկայութիւններ, հատկապես Մաադիի «Գոլեսթանից», թարգմանված են հայերենի:

Միջնադարյան մեր ձեռագրերում պահպանված մի քանի սուղ արվյալներ գեոեա 15-րդ դարից հալ իրականութեան ծանոթութիւնն են ապացուցում Սաադիի ստեղծագործութիւններին, սակայն Դպրի այս բառարանում մեջբերված հասկածները Սաադիի առաջժամ մեղ հալտնի, հայերեն տմենովաղ տպագիր թարգմանութիւններն են⁵⁷:

Գեորդ Դպրի պարսկերեն-հայերեն այս հոյակապ բառարանի առանձնահատկութիւնների ու առավելութիւնների, նրա ընդգրկած բազմաբնույթ նյութերի մասին կարելի է շատ աւելի երկար խոսել, բայց ասվածն էլ բավական է ցույց տալու պոլսահալ անխոնջ մտավորականի տարիների վաստակի արդյունքը հանդիսացող այս հուշարձանի գիտական արժեքն ու նշանակութիւնը:

⁵⁵ Գ և Բ Բ Գ Դ Ե Զ Ը Թ, Բառարան պարսկերէն, էջ 90:

⁵⁶ Անդ, էջ 83:

⁵⁷ «Պատմա-բանասիրական հանդէս» 1962 թ. ԱՅ 3-ում և «էջմիածին» հանդէսի 1962 թ. ԱՅ 8-ում հրապարակված Արփիկ Մինասյանի «Սաադիի «Գոլեսթանի» հայերեն թարգմանութիւնները» վերնագրերով հոդվածներում Սաադիի ստեղծագործութիւնների հայերեն տմենովաղ թարգմանութիւններ են համարված 1846—1847 թթ. «Ազգասերում» հրապարակված մի բառյակն ու «Բուսթանի» մի հատվածը, մինչդեռ Գեորդ Դպրի բառարանը հրապարակվել է 1826 թվականին, իսկ թարգմանութիւնները կատարված են դրանից էլ վաղ՝ 1812 թվականից (Դպրի մահը) առաջ:

‘Իպրի բառարանը իր հրապարակվելու օրվանից մինչև այսօր ամենուրեք շարունակվում է օգտագործվել: ‘Իա գրական այնպիսի մի կոթող է, որից դեռևս շատ երկար ժամանակ կարող է օգտվել և՛ պարսկերենը ուսումնասիրող հայ սկսնակը, և՛ ազգագրագետն ու բանագետը, և՛ լեզվաբանն ու դրականագետը:

Գեորգ ‘Իպրի պարսկերեն-հայերեն բառարանը, փաստորեն փակելով հին ու միջին դարերի հայ և իրանական ժողովուրդների գրական կապերի պատմությունը, միաժամանակ նոր փոխհարաբերությունների սկիզբը դարձավ, իսկ ինքը Գեորգ ‘Իպիր Պալատացին հանդիսացավ բառի իսկական առումով հայ արևելագիտություն հիմնադիրը: